

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2010 թվականի հոկտեմբերի 7-ին

«ԱԿՑԻԶԱՑԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հուլիսի 7-ի ՀՕ-79 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 2-րդ մասի «ապրանքների քանակը» բառերը փոխարինել «ապրանքների արժեքը (այդ թվում՝ մաքսային) կամ ապրանքների քանակը» բառերով:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի աղյուսակում ԱՏԳԱԱ 2208 ապրանքային ծածկագրին վերաբերող տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2208	սպիրտային խմիչքներ, բացառությամբ ԱՏԳԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օղիների	բացթողնման գնի (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի)	30 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 380 դրամ
		ապրանքների ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի	30 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 600 դրամ
	ԱՏԳԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օղիներ	տեղական արտադրության դեպքում՝ բացթողնման գնի (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի), իսկ ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի	30 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 500 դրամ».

2) 1-ին մասի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով՝

«2402 10 00011	սիգարներ՝ ծխախոտ պարունակող	1000	550000 դրամ
2402 90 00011	սիգարներ՝ այլ	հատ	
2402 10 00012	սիգարելաներ՝ ծխախոտ պարունակող	1000	15000 դրամ
2402 90 00012	սիգարելաներ՝ այլ	հատ	
2402 20 90011	սիգարետներ՝ ծխախոտ պարունակող, ֆիլտրով	1000	5000 դրամ
2402 20 10011	սիգարետներ՝ մեխակ պարունակող, ֆիլտրով	հատ	
2402 90 00013	սիգարետներ՝ այլ, ֆիլտրով		
2402 20 90012	սիգարետներ՝ ծխախոտ պարունակող, առանց ֆիլտրի	1000	1400 դրամ».
2402 20 10012	սիգարետներ՝ մեխակ պարունակող, առանց ֆիլտրի	հատ	
2402 90 00014	սիգարետներ՝ այլ, առանց ֆիլտրի		

3) 1-ին մասի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով՝

«271011	Բենզին	1 տոննա	25000 դրամ
2710	Դիզելային վառելիք	մաքսային արժեք կամ 1 տոննա	10 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 տոննայի համար 32500 դրամ».

4) 3-րդ մասից հանել «և ներմուծվող դիզելային վառելիքի ու բենզինի» բառերը.

5) ուժը կորցրած ճանաչել 3-րդ և 4-րդ մասերը.

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով՝

«6. Բենզինի 1 տոննայի համար սահմանված ակցիզային հարկի և օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի հանրագումարը 112000 ՀՀ դրամից պակաս լինելու դեպքում ակցիզային հարկն ավելացվում է այն չափով, որպեսզի բենզինի 1 տոննայի համար գանձվող ակցիզային հարկի և ԱԱՀ-ի հանրագումարը հավասարվի 112000 ՀՀ դրամի:»:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «, իսկ օրենսդրությամբ սահմանված կարգով ակցիզային հարկին փոխարինող հաստատագրված վճար վճարողների համար՝ հաստատագրված վճարներից նվազեցման ենթակա գումար,» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ 2-րդ հոդվածի 2-րդ ու 5-րդ կետերի և 3-րդ հոդվածի, որոնք ուժի մեջ են մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

Նախագահ

2010 թ. հոկտեմբերի 20
Երևան
ՀՕ-126-Ն